այնմ արժանավայել դիրք ստանալու ընդարձակ ասպարէզը ի նկատի ունենալով։

Էջմիածինը գործունէութեան այս երեք ասպարէզը առաջարկելով իւր ձեմարանի սաներին՝ ոչինչ պարտաւորական հարկով չէ կաշկանդում նոցա, նոցա վերայ դատաւոր՝ իրանց խիղճը կարգելով, եւ խոստանալով նոցա բարի դիտաւորութեանց միշտ քաջալեր հանդիսանալ, թէ Ս. Էջմիածնում ընդունելով իւր միաբանական Ուխտի շարքում եւ թէ դուրսը՝ իւր արժանաւոր հայ գործիչների կարգում։

Իսկ Արարատի Խմբագրութեան մնում է յաջողութիւն ցանկանալ յիշեալ պարոններին նոցա բարի մտադրութեանց համար։

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ ՆՈՐ ՑԱՋՈՐԴ.

Արարատի ընթերցողները պաշտօնական տեղեկութեանց մէջ կը տեսնեն, որ ի տեղի Արժ. Յուսիկ Վարդապետի Ալէքսանդրապօլու Ցաջորդ նշանակուած է Արժ. Սահակ Վարդապետ Բաղդասարեան. ի նկատի ունենալով Արժ. Հօր ուսումնասէր եռանդոտ, ժիր եւ գործունեայ՝ ընդհանին եւ ընկերական բնաւորութիւնը, Արարատի խմբագրութիւնը մեծայոյս է, որ Արժ. Հայրը կը կարողանայ Ալէքսանդրապօլի բազմազբաղ յաջորդութեան գործերին նախանձելի եւ օրինաւոր ընթացք տալ, կը կարողանայ իւր հօտի միջից բառնալով ամենայն տեսակ խառնաշփոթութիւնները, կը լինի արժանաւոր հովիւ, եւ ըստ այնմ գնահատուի թէ իւր ժողովրդից, նոցա համակրութիւնն ու համարումը վայելելով եւ թէ Ս. Էջմիածնից՝ իշխանութեան վստահութեանն արժանանալով։

Ցաջողութիւն ենք ցանկանում Արժ. Հօրը։